«Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 137-րդ հոդվածի առաջին և երկրորդ պարբերությունները փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 137. Անտոմս երթևեկելը

Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով անտոմս երթևեկելը առաջացնում է տուգանքի նշանակում՝

տեղական հաղորդակցության գնացքներով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով.

միջազգային հաղորդակցության գնացքներով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասունապատիկի չափով:

Տուգանքի վճարումը ուղևորին չի ազատում երթևեկության արժեքը վճարելուց»:

«Հոդվածը 2. Օրենսգրիրքը լրացնել նոր 226.1-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

Հոդված 226.1 Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով անտոմս երթևեկելու համար տուգանք նշանակող մարմինը.

Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով անտոմս երթևեկելու համար տուգանք է նշանակում երկաթուղային ենթակառուցվածքի կառավարիչը կամ երկաթուղային շարժակազմի օպերատորը, որի համար կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

Հոդված 3. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են օրենքի փոփոխությունները և լրացումներն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում: